

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՎԻՐԱԲՅԱՆ ԱՐՄԵՆ ՍՊԱՐՏԱԿԻ**

**ԶԱԲԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՈՑՈՒ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

**Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության սեղմագիր**

**ԵՐԵՎԱՆ – 2012**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար

պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Շահնազարյան Ա. Ի.

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր  
Մաթևոսյան Կ. Ա.

պատմական գիտությունների թեկնածու,  
պրոֆ. Հովհաննիսյան Պ. Հ.

Առաջատար կազմակերպություն

Խ. Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հունիսի 12-ին ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. մայիսի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### **ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:**

Միջնադարյան հայ պատմագրական ժառանգության համապարփակ ուսումնասիրությունը մեր պատմագիտության կարևորագույն հիմնախնդիրներից է: Նոր և նորագույն ժամանակաշրջանի հայոց պատմության նկատմամբ արդի հայ պատմագիտության սենեռուն ուշադրության պայմաններում հայոց հին և միջնադարյան պատմության և, հատկապես, հայ պատմագրության գիտական համակողմանի լուսաբանումն ավելի է արժևորվում: Ընդ որում, հայ պատմագրական ժառանգության աղբյուրագիտական և պատմաբնական վերլուծությունը մեզանում կատարվել է՝ առաջնահերթությունը տալով հարուստ նյութեր հաղորդած հեղինակների գործերին: Այս առումով XVII դ. պատմիչ Ջաքարիա Քանաքեռցին բացառություն չէ: Նրա պատմագրական երկը՝ «Պատմագրություն»-ը, չնայած իր հարուստ բովանդակությանը, ժանրային բազմազանությանն ու աղբյուրագիտական կարևորությանը, անհրաժեշտ աղբյուրագիտական հանգամանակից վերլուծության և զնահատանքի չի արժանացել՝ հայ պատմաբանների հպանցիկ ուշադրության եզրույթում հայտնվելով միայն հայոց պատմության առանձին վիճահարույց խնդիրների ուսումնասիրության ընթացքում: Հայ պատմագիտության այդ բացի լրացմանն է միտված սույն ուսումնասիրությունը:

Ջաքարիա Քանաքեռցու պատմագրական ժառանգության համակողմանի վերլուծության խնդիրը, բխելով հայապահպանությանն ուղղված մարտահրավերներից, չափազանց արդիական է: Հայոց անկախ պետականության բացակայության պայմաններում Արևելյան Հայաստանում պարսկական լծի հետևանքով հայ բնակչության սոցիալ-տնտեսական չափազանց ծանր վիճակի վերաբերյալ Ջաքարիա Քանաքեռցու վկայությունները կարևորվում են մերօրյա անկախության իրական արժեքն ընդգծելու առումով: XVIII դ. հայ իրականության մասին «Պատմագրության» վկայություններն առավելագույնս ընդգծում են պետականության դերը հայ ժողովրդի կյանքում:

Ջաքարիա Քանաքեռցու կողմից էջմիածնի կաթողիկոսական աթոռի համար հակոր-եղիակազարյան պայքարի ծանր հետևանքների նկարագրությունն ընդգծում է Ամենայն Հայոց և Սեօի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների՝ համահայկական խնդիրների շուրջ միասնաբար հանդես գալու, միմյանց դեմ պայքարելու փոխարեն իրար փոխլրացնելու անչափ կարևոր խնդիրները: «Պատմագրության» մեջ Սեփուլու վանականի գլխավորած աղանդավորական շարժման բացասական հետևանքների, ինչպես նաև պետականության բացակայության պայմաններում հայապահպանության գործում հայ առաքելական եկեղեցու ակնառու դերի արտացոլումը չափազանց կարևորվում է ներկա ժամանակաշրջանում հայոց եկեղեցական կառույցի դիրքերի ամրապնդման և տարատեսակ աղանդների դեմ պայքարի տեսանկյունից:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊՏԱԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Ատենախոսության նպատակն է աղբյուրների և մասնագիտական գրականության մանրազնին և անաչառ ուսումնասիրությամբ լուսաբանել հետևյալ հիմնախնդիրները.

- Պարզաբանել Ջաքարիա Քանաքեռցու կենսագրության հետ կապված վիճահարույց հարցերը:
- Ծճգրտել «Պատմագրության» երեք հատորների շարադրման ժամանակագրական սահմանները, երկի ստեղծման ընթացքում Ջաքարիա Քանաքեռցու ծրագրերն ու հետապնդած նպատակները:
- Բննել «Պատմագրության» լեզվա-ոճական առանձնահատկությունները:
- Բացահայտել «Պատմագրության» բանավոր և գրավոր աղբյուրները, դրանց հանդեպ Ջաքարիա Քանաքեռցու քննադատական վերաբերմունքի աստիճանը,

ցույց տալ այլ պատմիչների կողմից «Պատմագրության»՝ որպես սկզբնաղբյուր օգտագործած լինելու հանգամանքը:

- Վեր հանել «Պատմագրության»՝ մեզ հասած ձեռագիր մատյանների առանձնահատկությունները՝ տալով դրանց աղբյուրագիտական նկարագիրը, նկատված վրիպումներն ու բացթողումները:
- Ցույց տալ Երևանի XVII դ. խաների գործունեության, այդ դարի երկրորդ կեսի Հայոց եկեղեցու պատմության և Երևանի խանության XVII դ. սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ Չաքարիա Քանաքեռցու վկայությունների աղբյուրագիտական արժեքը:
- Բացահայտել կարա-կոյունլուների պետության XV դ., Սեֆյան Պարսկաստանի XVI-XVII դ. և Վրաստանի XVII դ. պատմության վերաբերյալ Չաքարիա Քանաքեռցու վկայությունների աղբյուրագիտական կարևորությունը:

**ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ:** Ատենախոսությունը

շարադրված է տարաբնույթ սկզբնաղբյուրների և թեմային վերաբերող զրականության համադիր քննության, ինչպես նաև փաստերի պատմաքննական և պատմահամեմատական վերլուծության սկզբունքի կիրառմամբ:

**ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:** Ատենախոսության

աղբյուրագիտական-պատմագրական բնույթը ժամանակագրական շրջանակների որոշման խնդիր չի առաջադրում: Նշենք միայն, որ «Պատմագրության» քննության առնված տեղեկությունները վերաբերում են ինչպես Արևելյան Հայաստանի ու Վրաստանի XVII դ., այնպես էլ կարա-կոյունլուների պետության XV դ. և Սեֆյան Պարսկաստանի XVI-XVII դ. պատմությանը:

**ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Ներկայացվող ուսումնասիրությունը դիտարկվող հարցերի ամբողջությամբ կատարվում է առաջին անգամ: Ատենախոսությունում տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա լուսաբանվել են Չաքարիա Քանաքեռցու կյանքին և պատմագրական ժառանգությանը վերաբերող վիճելի հարցերը: Մասնավորապես՝ ճշգրտվել են Չաքարիա Սարկավազի կենսագրությանը վերաբերող հիմնախնդիրները, բացահայտվել պատմիչի օգտագործած աղբյուրների շրջանակը, կատարվել է «Պատմագրության» ձեռագիր մատյանների աղբյուրագիտական հետազոտություն, «Պատմագրության» հետ այլ աղբյուրների, հայերեն և օտարալեզու տպագիր աշխատությունների համադիր քննությամբ առաջին անգամ իրականացվել է Արևելյան Հայաստանի, կարա-կոյունլուների պետության XV դ., Սեֆյան Պարսկաստանի XVI-XVII դդ., Վրաստանի XVII դ. պատմության վերաբերյալ Չաքարիա Քանաքեռցու վկայությունների պատմաքննական վերլուծությունը:

Ատենախոսությունում արված եզրակացությունները կարող են օգտագործվել Հայաստանի և հարակից երկրների ինչպես քաղաքական, այնպես էլ հայոց պատմության աղբյուրագիտության և պատմագրության հատուկ դասընթացներում ու դասագրքերում: Ատենախոսությունում կատարված քննությունը կարող է մեծապես նպաստել նաև «Պատմագրության» գիտաքննական տեքստի կազմմանը:

**ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել և

հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի կողմից:

Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած 4 հոդվածներում և հանրապետական գիտաժողովներում ընթերցած զեկուցումներում:

**ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՐՔՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ):** Չաքարիա Քանաքեռցու «Պատմագրություն»-ը հայ հետազոտողների թուզիկ ուշադրությանն է արժանացել գերազանցապես հայ ժողովրդի ուշ միջնադարյան պատմության հարցերի ուսումնասիրության առիթով: Առավել քիչ

անդրադարձ է կատարվել պատմիչի այն հիշատակություններին, որոնք լույս են սփռում Հայաստանին հարակից երկրների պատմության տարաբնույթ խնդիրների վրա:

Հայագիտության մեջ Ջաքարիա Քանաքեռցու անձի և ստեղծագործության վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն դեռևս չկա: Պատմիչի գործունեությանն անդրադարձել են մեծամասամբ հայ պատմագրությանն ու գրականությանը նվիրված աշխատությունների հեղինակները, որոնք փոքրածավալ հոդվածներ են նվիրել Ջաքարիա Քանաքեռցուն:

Ջաքարիա Քանաքեռցու կյանքին և պատմագրական ժառանգության խնդիրներին է նվիրված Աբել արքեպիսկոպոսի փոքրածավալ հոդվածը<sup>1</sup>: Այստեղ հեղինակը ներկայացրել է «Պատմագրության» և Հովհաննավանքի «Կոնդակ»-ի համառոտ բովանդակությունը, պատմիչի կենսագրության առանձին մանրամասներ: Մասնավորապես, հեղինակն անդրադարձել է Ջաքարիա Քանաքեռցու ծագման, սոցիալական պատկանելիության և հոգևոր գործունեության խնդիրներին: Հոդվածի վերջում համառոտ մեջբերում է կատարված Հովհաննավանքի «Կոնդակ»-ից:

Ջաքարիա Քանաքեռցու կյանքի և պատմագրական ժառանգության խնդիրներին թռուցիկ անդրադարձել է Ե. Դուրյանը<sup>2</sup>: Հեղինակը համառոտ ներկայացրել է պատմիչի կենսագրությունը, «Պատմագրության» երկու հատորների և Հովհաննավանքի «Կոնդակ»-ի բովանդակությունը:

Հայ պատմագրության այլ նշանավոր գործիչների կողքին Ջաքարիա Քանաքեռցու կյանքի և պատմագրական ժառանգության խնդիրներին է անդրադարձել Գ. Ջարպիանայանը<sup>3</sup>: Հեղինակն իր աշխատության մեջ ներկայացրել է պատմիչի կյանքը և գործունեությունը, համառոտ նկարագրել «Պատմագրության» և Հովհաննավանքի «Կոնդակ»-ի բովանդակությունը: Գ. Ջարպիանայանը, որպես իր ուսումնասիրության հանրագումար, նշել է, որ պատմիչն առավել ստուգապատում ձգտել է հանդես գալ «Պատմագրության» երկրորդ հատորում: Նա բարձր է գնահատել «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննու վանից»-ի պատմագիտական նշանակությունը՝ այն համարելով «աւելի հետաքննական», քան «Պատմագրություն»-ը<sup>4</sup>:

Ներկայացնելով Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի նկարագրությունը՝ Ղ. Ալիշանն իր աշխատության մեջ<sup>5</sup> անդրադարձել է նաև Հովհաննավանքի պատմությանը և վիմագիր արձանագրություններին՝ հիմնականում օգտվելով «Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից»-ից: Մեծանուն հայագետը շոշափել է նաև Ջաքարիա Քանաքեռցու կյանքի ու գործունեության առանձին մանրամասներ՝ պատմիչին համեմատելով Ստեփանոս Օրբելյանի հետ, որը շարադրել է Տաթևի վանքի պատմությունը<sup>6</sup>:

Հովհաննավանքի «Կոնդակ»-ի աղբյուրագիտական հետազոտության տեսանկյունից պետք է առանձնացնել Կ. Բասմաջյանի հոդվածը, ուր, որպես «Կոնդակ

<sup>1</sup> Աբել արքեպիսկոպոս, Կենսագրութիւն Ջաքարիայ պատմագրի սարկաւազի Յովհաննավանաց, «Արարատ» ամսագիր, աշխատասիրութիւն միաբանից Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, երրորդ տարի, Վաղարշապատ 1870, էջ 151-155: Այս հոդվածը վերահրատարակվել է 2009 թ.՝ հեղինակի երկերի ժողովածուում (Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանց, Կենսագրութիւն Ջաքարիայ պատմագրի սարկաւազի Յովհաննավանաց, երկերի ժողովածու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ, Ս. Էջմիածին, 2009, էջ 383-388):

<sup>2</sup> Դուրեան Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն: Ի պետս ազգային վարժարանաց, Կ. Պոլիս, 1885, էջ 81-82:

<sup>3</sup> Ջարպիանայեան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեան ի պետս ուսման ազգային վարժարանաց, Կ. Ք., նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 179-184:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 182-183:

<sup>5</sup> Ալիշան Ղ., Այրարատ (Բնաշխարհի Հայաստանեայց), Վենետիկ, 1890, էջ 170-175:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 174:

սուրբ ուխտին Յովհաննու վանից»–ի բնագիրը պարունակող էջմիածնի Մատենադարանի № 936 (այժմ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1522 ձեռագիր) ձեռագրի հանգամանակից ուսումնասիրության հանրագումար, լրացվել են «Կոնդակ»-ի 1870 թ. հայերեն հրատարակության մեջ տեղ գտած բազմաթիվ բացթողումներ<sup>7</sup>:

Ատենախոսության շարադրմանը մեծապես օգնել է Ա. Ղազկիյանի աշխատությունը<sup>8</sup>, որտեղ ներկայացված են ինչպես «Պատմագրության», այնպես էլ Յովհաննավանքի «Կոնդակ»-ի բոլոր ենթազույգների վերնագրերը: Հեղինակը ներկայացրել է նաև այն հեղինակներին, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են պատմիչի կյանքի և պատմագրական ժառանգության հետ կապված խնդիրներին:

Մեր առջև դրված խնդիրների հաղթահարմանը նպաստել են նաև Լեոի աշխատությունները<sup>9</sup>: Ուշ միջնադարյան հայոց պատմության և պատմագրության առանձին խնդիրների ուսումնասիրության ընթացքում հեղինակի ուշադրության կենտրոնում են հայտնվել նաև Ջաքարիա Քանաքեռցու կյանքի և պատմագրական ժառանգության հարցերը: Լեոն պատմիչի երկը համարել է կցկտուր պատմվածքների մի ժողովածու, որի մեջ առասպելը խառնված է իրողության հետ<sup>10</sup>: Բացի այդ, նշանավոր հայագետը նշել է, որ Ջաքարիա Քանաքեռցու մոտ բացակայում է քննադատական վերաբերմունքն իր հաղորդած մյուսի նկատմամբ<sup>11</sup>: Լեոն առավել բարձր է գնահատել որպես բանահավաքի Ջաքարիա Քանաքեռցու դերը՝ նրան համարելով հաշատուր Աբովյանի գրական նախահայր<sup>12</sup>:

Միջնադարյան մյուս պատմիչների շարքում Ջաքարիա Քանաքեռցու պատմագրական ժառանգությանն է անդրադարձել նաև Մ. Աբեղյանը<sup>13</sup>: Հեղինակը պատմիչին համարել է ժամանակի ուսյալ անձերից մեկը, որը, սակայն, աչքի է ընկնում իր միանությունամբ և խիստ մեղ հայացքով<sup>14</sup>: Մ. Աբեղյանը «Պատմագրության» առաջին գիրքն անարժեք է համարել՝ այն կազմված համարելով լուկ ժողովրդական զրույցներից և երգերից: Նա առավել բարձր է գնահատել «Պատմագրության» երկրորդ գիրքը՝ դրա հիմքը համարելով պատմական, որովհետև Ջաքարիա Քանաքեռցին որպես ակամատես է պատկերել իրադարձությունները<sup>15</sup>:

Ջաքարիա Քանաքեռցու կյանքի և պատմագրական ժառանգության խնդիրները հայտնվել են նաև Ն. Պողարյանի ուշադրության կենտրոնում: Հեղինակի աշխատության մեջ V-XVIII դդ. հայ մատենագրության մյուս նշանավոր գործիչների կողքին անդրադարձ է կատարվել նաև Ջաքարիա պատմիչի գործունեությանը<sup>16</sup>: Այստեղ համառոտ ներկայացված են Ջաքարիա Քանաքեռցու կենսագրական որոշ մանրամասներ, ինչպես նաև տրված է «Պատմագրության» աղբյուրագիտական ամփոփ գնահատականը: Ն. Պողարյանը ևս կարևոր աղբյուր է համարել հատկապես

<sup>7</sup> Բասմաջեան Կ., Ջաքարիա Սարկալազի «Կոնդակ»–ը, «Հուշարձան» գրական ժողովածու, Վիեննա, 1911, էջ 353-360:

<sup>8</sup> Ղազկիյան Ա., Հայկական մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, առաջին հատոր (Ա-Մ), Վենետիկ, 1909-1912, սյունակ 654-656:

<sup>9</sup> Լեո, Հայկական տպագրութիւն, հայերը մոր պատմութեան մեջ, պատմական-գրական տեսութիւն, առաջին հատոր, XVI-XVII դար, երկրորդ տպագրութիւն փոփոխած եւ լրացրած, Թիֆլիս, 1904, էջ 378-382, նույնի՝ Երկերի ժողովածու, հ. III, գիրք 1, Ե., 1969, էջ 354-357:

<sup>10</sup> Լեո, Հայկական տպագրություն, էջ 378-379:

<sup>11</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գիրք 1 էջ 356:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. Դ, Ե., 1970, էջ 525-530:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 525:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 527:

<sup>16</sup> Պողարեան Ն., Հայ գրողներ (Ե-Ժ դար), Երուսաղեմ, 1971 թ., էջ 560-562:

պատմիչի երկասիրության երկրորդ հատորը, իսկ առաջինը հարուստ է համարում «ռամկագիտական եւ ազգագրական նիւթերով»<sup>17</sup>:

Ձաքարիա Քանաքեռցու կյանքի և պատմագրական ժառանգության ուսումնասիրության համար կարևոր է Ա. Առաքելյանի աշխատությունը<sup>18</sup>: Հեղինակն անդրադարձել է պատմիչի կենսագրության առանձին մանրամասներին, ներկայացրել «Պատմագրության» և Հովհաննավանքի «Կոնդակ»-ի ամփոփ բովանդակությունը: Արժևորելով Ձաքարիա Քանաքեռցու երկասիրությունը՝ նա գտել է, որ պատմիչը սահմանափակվել է միայն իրադարձությունների չհամակարգված շարադրմամբ, և որ նրան չի հետաքրքրել ընթերցողին ճշմարտապատում նյութ մատուցելը: Ըստ Ա. Առաքելյանի՝ խորամուխ չլինելով իր աչքով տեսած իրադարձությունների քննության մեջ՝ Ձաքարիա Քանաքեռցին բավարարվել է միայն տեսածն ու լրածն անկողմակալ արձանագրելով<sup>19</sup>:

Ուշ միջնադարի հայ պատմագրության մյուս ականավոր ներկայացուցիչների կողքին Ձաքարիա Քանաքեռցու կյանքին և պատմագրական ժառանգությանը վերաբերող խնդիրները ևս հայտնվել են Լ. Բաբայանի ուշադրության կենտրոնում<sup>20</sup>: Նա իր աշխատության մեջ բավականին ընդարձակ անդրադարձ է կատարել պատմիչի երկի բովանդակությանը, վեր հանել «Պատմագրության» առանձին դրվագների աղբյուրագիտական հավաստիության աստիճանը, անդրադարձել հայ պատմագիտության կողմից Ձաքարիա Քանաքեռցու պատմագրական ժառանգության արժևորման խնդիրներին: Որպես իր ուսումնասիրության հանրագումար՝ հեղինակը նշել է, որ չնայած բազմաթիվ փաստական սխալներին և վրիպումներին՝ «Ձաքարիա Քանաքեռցու «Պատմությունն» իր պարունակած հարուստ նյութերով ու մատուցման ձևերով, պատկերավոր լեզվով, գեղջկական անմիջականությամբ ու պարզությամբ պատվավոր տեղ է գրավում հայ պատմագրության մեջ: Այն հիրավի պատմագրի ու նրա ապրած օրերի կենդանի հուշարձանն է»<sup>21</sup>:

Ձաքարիա Քանաքեռցու պատմագրական ժառանգության լուսաբանման հիմք են հանդիսացել հայկական, վրացական, պարսկական և թուրքական սկզբնաղբյուրները: Դրանց մի մասը կարևոր է «Պատմագրության» գրավոր աղբյուրագիտական հիմքը ճշգրտելու առումով, իսկ մնացածներն օգնում են՝ բացահայտելու Ձաքարիա Քանաքեռցու վկայությունների ու ժամանակագրության արժանահավատությունը:

Ձաքարիա Քանաքեռցու աշխատությունում Հայաստանի XVII դ. պատմությանը վերաբերող վկայությունների լուսաբանումն ու ճշգրտումը հնարավոր չէ կատարել՝ անտեսելով պատմիչին ժամանակակից հեղինակների հաղորդումները և դրանք մանրագնին չհամեմատելով «Պատմագրության» տեղեկությունների հետ: Այս առումով ամենաարժեքավորը պետք է համարել Ձաքարիա Քանաքեռցու ավագ ժամանակակից Առաքել Դավրիժեցու (1590–1670) «Գիրք պատմութեանց»-ը<sup>22</sup>: Ընդգրկելով շուրջ 60 տարվա (1602–1662) պատմություն՝ այն խիստ կարևոր է կարա-կոյունլու տիրակալների կառավարման, XVI–XVII դդ. թուրք-պարսկական պատերազմների, Վրաստանի XVII դ. պատմության, XVII դ. Երևանի խաների գործունեության վերաբերյալ Ձաքարիա Քանաքեռցու վկայությունների հավաստիությունը պարզելու

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 560:

<sup>18</sup> Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (XIV–XIX դդ առաջին կեսը), հ. II, Ե., 1964, էջ 560–569:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 567:

<sup>20</sup> Բաբայան Լ., Դրվագներ Հայաստանի XIV–XVIII դարերի պատմագրության, Ե., 1984, էջ 132–161:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 161:

<sup>22</sup> Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանկարյանի, Ե., 1990 (այսուհետև՝ Առաքել Դավրիժեցի):

առումով: Հատկապես շահեկան է 1604 թ. շահ Աբբաս I-ի (1587–1629) կազմակերպած մեծ բռնագողթի վերաբերյալ երկու պատմիչների վկայությունների համադիր քննությունը՝ դրա վերաբերյալ «Պատմագրության» հաղորդած որոշ փաստերի եզակիությունն ընդգծելու առումով:

Թեմայի ուսումնասիրության համար մեծաթեք է Գրիգոր Դարանաղցու (Կամախեցի) (1576–1643) «Ժամանակագրություն»-ը<sup>23</sup>, որը հիմնականում ընդգրկում է 1595–1634 թթ. իրադարձությունները: Վերջինիս նշանակությունը մեծ է հատկապես Մեխլու վանականի գլխավորած աղանդավորական շարժման վերաբերյալ Ջաքարիա Քանաքեռցու վկայությունների պատմաքննական վերլուծության առումով, քանի որ այդ իրադարձություններին միայն այս երկու պատմիչներն են անդրադառնում:

Հարուստ փաստական նյութերով կարևորվում է Ջաքարիա Ագուլեցու (1630–1691) «Օրագրություն»<sup>24</sup> փոքրածավալ երկը: Ընդգրկելով 1647–1684 թթ. ժամանակահատվածը՝ այն շատ արժեքավոր է հատկապես XVII դ. երևանի խաների գործունեության և 1679 թ. երևանի ավերիչ երկրաշարժի վերաբերյալ Ջաքարիա Քանաքեռցու վկայությունների լուսաբանման առումով:

Պարսից պետության վերաբերյալ «Պատմագրության» վկայությունները պատմահամեմատական քննությամբ լուսաբանելուն մեծապես օգնում է Բիթլիսի քուրդ Էմիր և պատմիչ Շարաֆ խան Բիթլիսիի «Շարաֆ–Նամե»<sup>25</sup> երկը: Նկարագրելով Պարսկաստանի պատմության մի ընդարձակ ժամանակաշրջանի (1290–1597) իրադարձությունները և աչքի ընկնելով ժամանակագրական ճշգրտությամբ՝ այն կարևորվում է նաև Սեֆյան տերության XVI դ. պատմության վերաբերյալ Ջաքարիա Քանաքեռցու վկայությունները լուսաբանելու առումով:

«Պատմագրության» մեջ արծարծված առանձին խնդիրների լուսաբանման առումով արժևորվում են թուրքական աղբյուրները: Թուրք–պարսկական հարաբերությունների հորձանուսում հայտնված Հայաստանի մասին արժեքավոր տեղեկություններ պարունակող թուրք պատմագիրներ Մուստաֆա Քյաթիբ Չելեբիի, Նայիմայի և այլոց աշխատությունների Հայաստանին և հայերին վերաբերող հատվածները թարգմանվել և երկու հատորով հրատարակվել են<sup>26</sup>: Դրանցում XVI–XVII դդ. Պարսկաստանի ներքաղաքական խնդրումների, 1630–ական թվականների թուրք–պարսկական պատերազմի՝ գերազանցապես Հայաստանի տարածքում ծավալված ռազմական գործողությունների, 1639 թ. Կասր–ե Շիրիմի հաշտության պայմանագրի կնքման մանրամասների, Գեորգի Սահակաձեի գլխավորած հակապարսկական ապստամբության վերաբերյալ տեղ գտած ուշագրավ տեղեկությունները կարևորվում են Ջաքարիա Քանաքեռցու նույնաբովանդակ հաղորդումների պատմահամեմատական վերլուծության առումով:

Վրաստանի XVII դ. քաղաքական պատմության վերաբերյալ Ջաքարիա Քանաքեռցու վկայությունների ուսումնասիրության տեսանկյունից չափազանց

<sup>23</sup> Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցույ կամ Դարանաղցույ, առաջաբ., հրատ.՝ Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915:

<sup>24</sup> Ջաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Ե., 1938:

<sup>25</sup> Памятнику письменности Востока, XXI, 2, Шараф–хан Ибн Шамсадин Бидлис, Шараф–Наме, т. II, перевод, примечания и приложения Е. И. Васильевой, М., 1976 (այսուհետև՝ Шараф–Наме, т. II):

<sup>26</sup> Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի նյութ ժողովուրդների մասին, հ. I, թարգմանությունը թուրքերեն բնագրերից, ներածությունը, ծանոթագրությունները, տերմինաբանական բառարանով և հավելվածով կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Ե., 1961, հ. II, թարգմանությունը թուրքերեն բնագրերից, ներածությունը, ծանոթագրությունները, տերմինաբանական բառարանով և հավելվածով կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Ե., 1964:



կարևորվում են վրացական աղբյուրները<sup>27</sup>: Դրանց օգնությամբ հնարավոր է դառնում վեր հանելու XVII դ. Վրաստանի պատմության, մասնավորապես հակապարսկական ելույթների վերաբերյալ «Պատմագրության» վկայությունների հավաստիությունն ու օբյեկտիվությունը:

Այսպիսով՝ վերոհիշյալ սկզբնաղբյուրներն ու աշխատությունները հնարավորություն են տալիս՝ լուսաբանելու Չաքարիա Քանաքեռցու պատմագրական ժառանգության առանցքային հիմնահարցերը՝ իրական հիմքեր ստեղծելով ուշ միջնադարի հայ պատմագիտության վերջին երախտավորներից մեկի աղբյուրագիտական ծանրակշիռ դերն ընդգծելու համար:

### **ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿՆՈՒԹՅԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 174 էջ:

***ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ*** հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, տրվել է հիմնախնդրին վերաբերող սկզբնաղբյուրների ու առկա գրականության տեսությունը:

***Առաջին գլուխը՝ «ՁԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑԻՆ ԵՎ ՆՐԱ «ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ»-Ը***, բաղկացած է հինգ ենթագլխից:

***Առաջին ենթագլխում՝ «Չաքարիա Քանաքեռցու ժամանակը և կենսագրությունը»***, ամփոփ կերպով ներկայացված է XVII դ. առաջին կեսին թուրք-պարսկական պատերազմների թատերաբեմ հանդիսացած Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր վիճակը: Անդրադարձ է կատարված 1639 թ. Կասր-ե Շիրինի հաշտությամբ Հայաստանի մշակութային կյանքի վերելքի համար ստեղծված նպաստավոր պայմաններին, որի ազդեցությամբ պայմանավորված՝ վերելք ապրեց նաև հայ պատմագրությունը: Պարզաբանված են Չաքարիա Քանաքեռցու կենսագրությանը վերաբերող վիճահարույց խնդիրները:

Հայ ժողովրդի համար չարիք դարձած երկարատև թուրք-պարսկական պատերազմները, որոնք ավերի ու ավարի ենթարկեցին Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածները և պատճառ հանդիսացան մարդկային ու նյութական հսկայական կորուստների, ի վերջո ավարտվեցին 1639 թ. մայիսի 17-ին Կասր-ե Շիրին կոչված վայրում երկու պետությունների միջև կնքված հաշտության պայմանագրով: Դրանով հայության համար ստեղծվում էին համեմատաբար խաղաղ և նպաստավոր պայմաններ՝ ազգային համախմբման, ինչպես նաև տնտեսական ու հոգևոր-մշակութային կյանքի վերածնման ու զարգացման համար: Մշակութային այս նոր զարթոնքի պայմաններում հայ պատմագրության մյուս ներկայացուցիչների կողքին իր արժանի տեղն է զբաղեցրել Չաքարիա Քանաքեռցին, որի «Պատմագրություն»-ը դարձավ հայ միջնադարյան պատմագրության վերջին նշանավոր պատմագրական հուշարձաններից մեկը:

Չաքարիա Քանաքեռցու կենսագրությանը վերաբերող առաջին խնդիրը, որը ճշգրտման կարիք ունի, նրա ծննդյան թվականն է: Լեոն Նշում է, որ պատմիչը ծնվել է XVII դ. 20-ական թվականներին<sup>28</sup>: Մի քանի աշխատություններում էլ իբրև թվական

<sup>27</sup> Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ (ԺԳ–ԺԸ դար): Քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն–ծանոթություններով և հավելվածով Լ. Մելիքսեթ–Բեկ, Ե., 1936, Источнику по истории Грузии, 66, Парсадан Горджианидзе, История Грузии, перевод Р. К. Кикнадзе и В. С. Пугуридзе, исследование и указатели Р. К. Кикнадзе, Тбилиси, 1990 (այսուհետև՝ Парсадан Горджианидзе, Вахушти Багратиони, История царства грузинского, перевод, снабдил предисловием, словарями и указателем Н. Т. Накашидзе, Тбилиси, 1976 (այսուհետև՝ Вахушти Багратиони):

<sup>28</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գիրք 1, էջ 354:

հիշատակվում է 1627-ը<sup>29</sup>: Այս թվականը նշելիս հեղինակները հենվում են Հովհաննավանքի «Կոնդակ»-ի հատվածներից մեկի վրա, որտեղ Ջաքարիա Քանաքեռցին հայտնում է, որ վանքի պատմությունն սկսել է գրի առնել 1687 թ.՝ 60 տարեկան հասակում<sup>30</sup>:

Մեզ է հասել 1676 թ. սեպտեմբերին Ջաքարիա Քանաքեռցու ձեռքով ընդօրինակված մի ձեռագիր ժողովածու, համաձայն որի՝ նույն թվականին պատմիչը եղել է 50 տարեկան<sup>31</sup>: Հավատարմով այս վկայությանը՝ Ջաքարիա Քանաքեռցու ծննդյան թվականը կլինի 1626-ը՝ 1676-50=1626: Այս թվականի օգտին են խոսում հետևյալ հանգամանքները՝ ա) Հովհաննավանքի «Կոնդակ»-ում Ջաքարիա Քանաքեռցին նշում է միայն երկի շարադրանքի սկզբնական տարեթիվը (1687), իսկ Մատենադարանի № 1404 ձեռագրի հիշատակարանում պատմիչը, բացի թվականից, նշում է նաև ձեռագրի ընդօրինակման կոնկրետ ամիսը (1676 թ. սեպտեմբեր), բ) Զ. Պատկանյանը ևս պատմիչի ծնունդը թվագրում է 1626-ով՝ չնշելով, սակայն, իր սկզբնաղբյուրը<sup>32</sup>: Հետևաբար, Ջաքարիա Քանաքեռցու ծննդյան տարեթիվ պետք է համարել 1626-ը:

Ջաքարիա Քանաքեռցու մահվան ստույգ թվականը հայտնի չէ: «Պատմագրության» շարադրանքը պատմիչն ավարտում է 1699-ին<sup>33</sup>, ինչը նրա վերաբերյալ մեր ունեցած վերջին հիշատակությունն է:

Մեզ է հասել մի ձեռագիր, որն առավել ճիշտ պատկերացում է տալիս Ջաքարիա Քանաքեռցու մահվան թվականի վերաբերյալ: Նրանում տեղ է գտել Սպահանում 1724 թ. Մովսես Ջուղայեցու պատվերով Ավետիս Երեցի գրած մի ժողովածու<sup>34</sup>, որի բաղկացուցիչ մասերից է հայոց պատմագիրների ցանկը՝ «Պատմագիրք Հայոցը»-ը: Ժողովածուի մեջ 1701-ը նշված է որպես Ջաքարիա Սարկավազի աշխատության ավարտի տարեթիվ: Բայց քանի որ «Պատմագրություն»-ում որպես երկի ավարտելու տարեթիվ հիշատակված է 1699-ը, պնդելի է, որ Ավետիս Երեցի հիշատակած 1701 թ. Ջաքարիա Քանաքեռցու մահվան տարեթիվն է:

**Երկրորդ ենթադրություն՝ «Պատմագրության» հորինման հանգամանքները, կառուցվածքը և լեզուն**, վեր են հանված երկի ստեղծման ընթացքում Ջաքարիա Քանաքեռցու ծրագրերն ու հետապնդած նպատակները, «Պատմագրության» երկու հատորների, ինչպես նաև Հովհաննավանքի «Կոնդակ»-ի շարադրման ժամանակագրական սահմանները: Պարզաբանված են «Պատմագրության» լեզվա-ոճական առանձնահատկությունները:

Զնայած Ջաքարիա Քանաքեռցու վկայությամբ «Կոնդակ սուրբ ուխտին Յոհաննու վանից»-ի շարադրանքով ինքը խնդիր է դրել գրավոր տեսքի բերելու Հովհաննավանքի վիճակի արձանագրությունները<sup>35</sup>, սակայն երկի ստեղծմամբ պատմիչը հետապնդել է

<sup>29</sup> Պողարեան Ն., նշվ. աշխ., էջ 560, Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 525, Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՄՀ ԳԱ հրատարակություն, հ. IV, Ե., 1972, էջ 496, Բաբայան Լ., նշվ. աշխ., էջ 132, Առաքելյան Ա., նշվ. աշխ., էջ 560, Մելիք-Քախչյան Ստ., Հայոց պատմության արդյուրագիտություն, Ե., 1989, էջ 249:

<sup>30</sup> Ջաքարիա Սարկավազ, Պատմագրություն, հ. III, Վաղարշապատ, 1870, էջ 2 (այսուհետև՝ Ջաքարիա Սարկավազ, հ. I-III, Վաղարշապատ, 1870):

<sup>31</sup> Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 1404, էջ 606 բ (այսուհետև՝ Մատենադարան):

<sup>32</sup> Патканов К., Еублографическiи очерк армянскоу историческоу литературы, С.–Петербург, 1880, с. 50.

<sup>33</sup> Ջաքարիա Սարկավազ, հ. III, էջ 142-143:

<sup>34</sup> Տուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Ձեյրունյան, Փ. Անթաթյան, Մերձօրությունը Օ. Եզանյանի, խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Ե., 1965, սյունակ 762:

<sup>35</sup> Ջաքարիա Սարկավազ, հ. III, էջ 60:

նաև այլ նպատակներ: Հովհաննավանքի «Կոնդակ»-ն իր ձևով ու բովանդակությամբ պատկանում է «Կանից Պատմութիւնք» ընդհանուր խորագրի տակ համախմբված և մասամբ հորինված և առասպելական համարվող այն պատմությունների շարքին, որոնց նպատակն է եղել սրբազործել վանական ու եկեղեցական նշանավոր հաստատությունների գոյությունը<sup>36</sup>: Չաքարիա Քանաքեռցին, հիմնվելով միայն Առաքել Դավրիժեցու բանավոր վկայության վրա<sup>37</sup>, Հովհաննավանքի կառուցումը սրբազործված է համարում Հովհաննես Սկրտչի մատուցներով<sup>38</sup>: Իսկ «Պատմագրության» միջոցով հայրենասեր պատմիչը նպատակ է հետապնդել զալիք սերունդների համար ստեղծելու Հայաստանի ազատագրության իրականացման համար անհրաժեշտ գաղափարական հիմքեր:

Չաքարիա Քանաքեռցին սկզբնապես շարադրել է Հովհաննավանքի «Կոնդակ»-ը, ապա «Պատմագրության» առաջին երկու հատորները<sup>39</sup>: Չաքարիա Քանաքեռցին «Կոնդակ»-ի շարադրանքն սկսել է 1687 թ.: Սակայն դրա ավարտի թվականի վերաբերյալ պատմիչը լռում է: Այս խնդրի վրա լույս է սփռում 1687 թ. Չաքարիա Քանաքեռցու ձեռքով նորոգված<sup>40</sup> Սատենադարանի № 1522 ձեռագիրը, որի կազմում էլ պատմիչը գետեղել է «Կոնդակ»-ը: Հետևաբար, «Կոնդակ»-ի շարադրանքի ավարտման թվական պետք է համարել 1687-ը:

«Պատմագրության» առաջին երկու հատորների շարադրման սկզբնական տարեթվի մասին Չաքարիա Քանաքեռցին չի խոսում: Դրա փոխարեն, որպես երկի ավարտի տարեթիվ պատմիչը նշում է 1699-ը<sup>41</sup>: Հետևաբար, պետք է ենթադրել, որ «Պատմագրության» շարադրանքը Չաքարիա Քանաքեռցին սկսել է Հովհաննավանքի «Կոնդակ»-ն ավարտելուց հետո՝ 1687 թ.:

«Պատմագրություն»-ն աչքի է ընկնում կենդանի լեզվով և պարզ ոճով: Երկի լեզվին բնորոշ են XV-XVIII դդ. հայկական մատենագրության առանձնահատկությունները՝ այն է՝ գրաբարի և աշխարհաբարի խառը գործածումը՝ համեմված պարսկերեն և թուրքերեն բառերով:

**Երրորդ ենթազվխում՝ «Պատմագրության» աղբյուրները**, բացահայտված են «Պատմագրության» և Հովհաննավանքի «Կոնդակ»-ի բանավոր և գրավոր աղբյուրները, դրանց հանդեպ Չաքարիա Քանաքեռցու քննադատական վերաբերմունքի աստիճանը: Ցույց է տրված «Պատմագրության»՝ այլ պատմիչների համար սկզբնաղբյուր հանդիսանալը:

Չաքարիա Քանաքեռցին մեծապես արժևորել է բանավոր աղբյուրը՝ ժողովրդական գրույցները, առասպելները, ականատեսների վկայությունները: Սրան զուգարկում է հեղինակի խոսքը, քանի որ պատմիչն իր նկարագրած իրադարձությունների մի մասի ժամանակակիցն ու ականատեսն է եղել: Չաքարիա Քանաքեռցին մեծ տեղ է հատկացրել նաև աշխարհիկ գրույցներին, որոնց հիմքը ժողովրդական բանահյուսությունն է:

Պատմիչն իր երկը շարադրելիս օգտագործել է բազմաբնույթ գրավոր աղբյուրներ՝ Հայսմավուրք, հիշատակարաններ, կոնդակներ, պատմողական բնույթի երկասիրություններ:

<sup>36</sup> Խաչիկյան Լ., Հայ միջնադարյան «Կանից պատմութեանց» գնահատման հարցի շուրջ, Աշխատութիւններ, հ. Ա, «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, Ե., 1995, էջ 109:

<sup>37</sup> Չաքարիա Սարկավագ, հ. III, էջ 4:

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 526-527:

<sup>40</sup> Սատենադարան, ձեռագիր № 1522, էջ 568 ա:

<sup>41</sup> Չաքարիա Սարկավագ, հ. II, էջ 142-143:

Չաքարիա Քանաքեռցին հիշատակարաններից օգտվել է իր աշխատության առաջին հատորի շարադրման ժամանակ<sup>42</sup>: Դրանց օգնությանը պատմիչը դիմում է նաև Գովհաննավանքի պատմությունը շարադրելիս<sup>43</sup>:

Գովհաննավանքի պատմությունը շարադրելիս տեղի «Կոնդակ»-ից բացի Չաքարիա Քանաքեռցին օգտվել է նաև Տաթևի վանքի «Կոնդակ»-ից: Այդ հանգամանքը, պատմիչի ուղղակի հիշատակությունից բացի՝ «Կոնդակն Տաթևու գրեալ է»<sup>44</sup>, հաստատվում է նաև երկի այդ հատվածը Ստեփանոս Օրբեյանի պատմության մեջ զետեղված Տաթևի «Կոնդակի» հետ համեմատելիս<sup>45</sup>:

Չաքարիա Քանաքեռցին որպես աղբյուր լայնորեն օգտագործել է Գովհաննավանքի վիմագիր արձանագրությունները՝ այդ առումով նմանվելով Ստեփանոս Օրբեյանին: «Պատմագրություն»-ում ներկայացված արձանագրությունների մեծ մասը հասել է մինչև մեր օրերը: Սակայն քիչ չեն այնպիսիները, որոնք զանազան պատճառներով չեն պահպանվել<sup>46</sup>: Ուստի այդ արձանագրությունները մեզ հասցրած Չաքարիա Քանաքեռցու «Պատմագրություն»-ը նաև վիմագրական առումով սկզբնաղբյուրի արժեք ունի:

Ինչպես Չաքարիա Քանաքեռցու վկայություններից, այնպես էլ միջնադարի հայ պատմագրության մի շարք կոթողների հետ «Պատմագրության» համապատասխան հատվածների համեմատությունից պարզ է դառնում, որ պատմիչն օգտվել է Ազաթանզդոսից, Մովսես Խորենացուց, Փավստոս Բուզանդից, Անանուն գրուցագրից (կարծեցյալ Շապուհ Բագրատունի), Կիրակոս Գանձակեցուց, Ստեփանոս Օրբեյանից, Թովմա Մեծոփեցուց, Գովհանիսիկ Ծարեցուց և Առաքել Դավրիժեցուց:

Աղբյուրագիտական-համեմատական քննությունը փաստում է Խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից»-ի և Սինաս Անդեցու<sup>47</sup> «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ի համար «Պատմագրության» աղբյուր հանդիսանալը:

**Չորրորդ ենթագլխում՝ «Պատմագրության» ձեռագրերը**, քննվել են «Պատմագրության» և Գովհաննավանքի «Կոնդակ»-ի՝ մեզ հասած ձեռագիր մատյանների առանձնահատկությունները՝ տալով դրանց աղբյուրագիտական նկարագիրն ու նկատված վրիպումներն ու բացթողումները:

«Պատմագրություն»-ը և «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննու վանից»-ը պարունակող ձեռագրերը, որոնք հինգն են, պահվում են Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (Մատենադարան): Այդ ձեռագրերն ունեն հետևյալ թվահամարները՝ 1522, 1662, 3024, 8018 և 8636:

№ 1522 ձեռագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Գովհաննավանքի «Կոնդակ»-ի 1870 թ. հայերեն հրատարակության մեջ ժԱ զվխի երկու ենթագլուխների տեղերը փոխված են<sup>48</sup>: Նույն կերպ Գովհաննավանքի վանահայրերի պաշտոնավարումը

<sup>42</sup> Նույն տեղում, հ. I, էջ 68:

<sup>43</sup> Նույն տեղում, հ. III, էջ 5:

<sup>44</sup> Նույն տեղում:

<sup>45</sup> Նույն տեղում, հմտ. Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 76:

<sup>46</sup> Ղաֆադարյան Կ., Գովհաննավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948, էջ 116:

<sup>47</sup> Սինաս վարդապետ Անդեցու՝ «Պատմութիւն քաղաքին Յանույ»-ի հեղինակ հանդիսանալը իրավացիորեն փաստարկել են Յու. Վարդանյանը (Վարդանյան Յու., «Պատմութիւն քաղաքին Յանույ» բանաբաղության հեղինակի և ժամանակի հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 1985, № 2, էջ 212-225) և Գ. Մարգարյանը (Մարգարյան Գ., Չաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1992, № 2-3, էջ 141):

<sup>48</sup> Չաքարիա Սարկավագ, հ. III, էջ 17-18, հմտ. Մատենադարան, ձեռագիր № 1522, էջ 487 ք: «Պատմագրության» ռուսերեն հրատարակության մեջ ևս նույն սխալն է նկատվում (Закарян

նկարագրող հատվածում փոխված են հայր Յամազասպի և հայր Սկրտիչի պաշտոնավարման նկարագրությունների տեղերը<sup>49</sup>։ Այս փոփոխությունը կատարվել է «Պատմագրության» հրատարակիչների կողմից՝ ճշգրտելով ձեռագրում առկա ժամանակագրական սխալ հաջորդականությունը։

№ 1662 ձեռագրի տարբեր հատվածներում բաց են թողնված բառեր, բառակապակցություններ, կամ ամբողջական նախադասություններ, որոնց տեղում նշան է դրված և լրացված նույն էջի լուսանցքում<sup>50</sup>։

№ 3024 ձեռագրի համար հիմք է հանդիսացել Մատենադարանի № 8018 ձեռագիրը։ Այս տեսակետն առաջ քաշելու համար մեզ համար հիմք են հանդիսացել երկու ձեռագրերում նկատված այն նմանությունները, որոնք «Կոնդակ»-ը պարունակող № 1522 և № 8636 ձեռագրերում այլ կերպ են ներկայացված։ Այսպես՝ երկու ձեռագրում էլ բաց է թողնված «Ի տաճարն ի գլուխ աւանդատան» վերնագրով<sup>51</sup> արձանագրությունը, որը № 1522 և № 8636 ձեռագրերում առկա է<sup>52</sup>։ Ի տարբերություն № 1522 և № 8636 ձեռագրերի, № 3024 և № 8018 ձեռագրերում թվականները տառերով գրելու փոխարեն որոշ դեպքերում գրված են թվերով<sup>53</sup>։

№ 8018 ձեռագրի վերջում կան պակասող թերթեր։ Ձեռագրի վերջին գլուխը Ջաքարիա վարդապետի վարքն է՝ կիսատ, իսկ «Կոնդակ»-ի վերջին երեք՝ «Վասն սրբոյն Գեորգայ Զօրավարի», «Վասն մնացեալ նշխարաց սրբոյն» և «Թէ զի՞նչ եղին որդիք ազատացն Վրաց» վերնագրերով գլուխները ձեռագրում պակասում են։

№ 8636 ձեռագրի 47 ք - 48 ա էջերում պակասում են «Կոնդակ»-ի ԺԱ (X) գլխի «Ի գաւիթն ի հիւսիսոյ որմն» և «Աւետարանի յիշատակարանին» վերնագրերով արձանագրությունների մի մասը և «Արձանք՝ որոց ոչ գոյ թուական» վերտառությամբ արձանագրության ամբողջական հատվածը։ Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ 1870 թ. հայերեն հրատարակության երրորդ հատորի մեջ, որը կազմվել է այս ձեռագրի հիման վրա, վերոհիշյալ հատվածներն առկա են<sup>54</sup>, ապա կարելի է եզրակացնել, որ ձեռագրից դրանք ներառող թերթը 1870-ից հետո է պոկվել։

**Յինգերորդ ենթագլխում՝ «Պատմագրության» հրատարակություններն ու թարգմանությունները**, ներկայացված են «Պատմագրության» հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն հրատարակությունների համառոտ նկարագիրն ու պատմագիտական արժեքը։

«Պատմագրության» հայերեն բնագրի առաջին երկու հատորները հրատարակվել են Մատենադարանի № 1662, իսկ երրորդ հատորը՝ «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննու վանից»-ը, № 8636 ձեռագրերի հիման վրա։

Այս հրատարակության մեջ կան շատ բացթողումներ, որոշ տեղերում առկա են ձեռագրի սխալ ընթերցումներ։ Պա բացատրվում է նրանով, որ հրատարակիչները, ձեռքի տակ այլ ձեռագրեր չունենալով, զրկված են եղել համեմատություն կատարելու և սխալները սրբագրելու հնարավորությունից։

---

Канакерци, Хроника, перевод с армянского, предисловие и комментарий М. О. Дарбинян–Мелкян, Москва, 1969, с. 247-248 (այսուհետև՝ Закарян Канакерци)։

<sup>49</sup> Մատենադարան, ձեռագիր № 1522, էջ 490 ք - 491 ա, հմնտ. Ջաքարիա Սարկավազ, հ. III, էջ 30։ Նույն սխալը կատարված է «Պատմագրության» ռուսերեն հրատարակության մեջ (Закарян Канакерци, с. 260-261)։

<sup>50</sup> Նման բացթողումներ առկա են Մատենադարանի № 1662 ձեռագրի 36 ք, 47 ա, 48 ա, 70 ք, 117 ա, 121 ա, 190 ք, 200 ա, 201 ա, 211 ք և այլ էջերում։

<sup>51</sup> Յովհաննավանքի վիմագիր արձանագրություններին անդրադառնալիս «վերնագիր» եզրույթն օգտագործել ենք պայմանականորեն։

<sup>52</sup> Մատենադարան, ձեռագիր № 3024, էջ 140 ք, նույն տեղում, ձեռագիր № 8018 էջ 21 ա, հմնտ. նույն տեղում, ձեռագիր № 1522, էջ 489 ք, նույն տեղում, ձեռագիր № 8636, էջ 52 ք - 53 ա։

<sup>53</sup> Նույն տեղում, ձեռագիր № 3024, էջ 141 ք, հմնտ. նույն տեղում, ձեռագիր № 8018, էջ 22 ք։

<sup>54</sup> Ջաքարիա Սարկավազ, հ. III, էջ 22։

«Պատմագրություն»-ը թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն:

Երկի ռուսերեն թարգմանությունն իրականացրել է Մ. Դարբինյան-Սելիքյանը: Այն լույս է տեսել Մոսկվայում՝ 1969 թ.<sup>55</sup>: Թարգմանությունն ունի ընդարձակ առաջաբան, որտեղ հեղինակն անդրադառնում է Չաքարիա Քանաքեռցու ապրած ժամանակաշրջանին, պատմիչի կենսագրությանը, երկի բովանդակությանը, կառուցվածքին ու պատմագիտական արժեքին:

«Պատմագրության» ֆրանսերեն թարգմանությունն իրականացրել է Մ. Բրոսսեն՝ 1876 թ.<sup>56</sup>: Այն կատարվել է 1870 թ. հայերեն հրատարակության հիման վրա և ոչ մի նոր բան չի պարունակում: Նրա ամենամեծ արժեքն այն է, որ այս թարգմանության միջոցով «Պատմագրություն»-ը հասանելի դարձավ նաև եվրոպացի ընթերցողին:

«Պատմագրության» անգլերեն թարգմանությունն իրականացրել է Իոնայի համալսարանի պրոֆեսոր Ջ. Բուրնոնյանը 2004 թ.<sup>57</sup>: Թարգմանության վերջում զետեղված են XVII դ. Սեֆյան Պարսկաստանի և Արևելյան Հայաստանի քաղաքական քարտեզները<sup>58</sup>: Ընդարձակ եզրակացության մեջ Ջ. Բուրնոնյանը ներկայացրել է XVI-XVII դդ. Սեֆյան Պարսկաստանի քաղաքական պատմությունը, Չաքարիա Քանաքեռցու կենսագրությունը, ինչպես նաև անդրադարձել «Պատմագրության» աղբյուրագիտական արժևորման խնդրին:

***Երկրորդ գլուխը՝ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ XVII դ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆ ԸՍՏ ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՐՑՈՒՄ»***, բաղկացած է երեք ենթագլխից:

***Առաջին ենթագլխում՝ «Երևանի XVII դ. խաների գործունեությունը»***, վերլուծության են ենթարկված Երևանի XVII դ. խաների գործունեության վերաբերյալ Չաքարիա Քանաքեռցու վկայությունները, վեր է հանված դրանց հավաստիության և օբյեկտիվության աստիճանը:

Երևանի խաների մասին Չաքարիա Քանաքեռցու առաջին տեղեկությունները վերաբերում են Ամիրզունա խանին (1604-1626): Պատմիչի համաձայն՝ խանը մեծ եռանդով աշխատում էր վերաբնակեցնել հատկապես Երևանի շրջակայքում գտնվող ամայի գյուղերը: Այդ նպատակով խանն արշավանքներ կատարեց դեպի Էրզրումի, Վանի ու Մշո շրջաններ և այնտեղից մեծ թվով հայերի վերաբնակեցրեց Արարատյան դաշտի ավերակ գյուղերում<sup>59</sup>:

Չաքարիա Քանաքեռցու համաձայն՝ ինը տարի (1626-1635) իբրև խան պաշտոնավարած Թահմասպուլի խանն արշավել է Երևանի խանության սահմաններին մշտապես սպառնացող Արևմտյան Հայաստանի քրդական աշիրաթների դեմ<sup>60</sup>, հայերի գործուն մասնակցությամբ կազմակերպել Շիրակի դաշտն ու Ապարանի, Կարբիի և Գըրիխբուլախի գավառները ասպատակած թուրքական զորքերի դեմ պայքարը<sup>61</sup>:

«Պատմագրության» հաղորդմամբ՝ Քալբալի (1636-1639) խանի օրոք սուլթան Մուրադ IV-ի (1623-1640) հրամանով Երևանի խանությունը ենթարկվում է թուրքական զորքի և Ղրիմի խանի ուղարկած 500 թաթարներից բաղկացած հրոսակային ջոկատի

<sup>55</sup> Закариу Канакерци, Хроника, перевод с армянского, предисловие и комментарий М. О. Дарбунян-Меликян, Москва, 1969.

<sup>56</sup> Brosset M., Me'moires historiques sur les Sofis par le diacre Zakaria, Collection d'historiens arme'niens, t. II, SPb., 1876.

<sup>57</sup> The Chronicle of Deacon Zak'aria of K'anak'er (Zak'areay Sarkawagi Patmagrut'iwn), Annotated Translation and Commentary by George A. Bournoutian, Costa Mesa, California, Mazda publishers, 2004:

<sup>58</sup> Chronicle of Deacon Zak'aria of K'anak'er, էջ 312-315:

<sup>59</sup> Չաքարիա Սարկավազ, հ. I, էջ 60-61:

<sup>60</sup> Նույն տեղում:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 85:

հարձակմանը<sup>62</sup>: Համաձայն պատմիչի՝ Երևանի Քարահանք թաղամասում Քալբալի խանն անակնկալ հարձակում է գործում՝ պարտության մատնելով թշնամուն<sup>63</sup>:

Չաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ Քալբալուն հաջորդած Ջաղաթա Մահմադ խանը (1639-1647) չէր վճարում նույնիսկ պարսիկ զինվորականների աշխատավարձերը: Արդյունքում՝ շահը 1647 թ. Ջաղաթայի փոխարեն Հայաստան է ուղարկում ազգությամբ վրացի Խոսրովին (1647-1653), որի օրոք, քրիստոնյաների հարկերը թեթևանում են, իսկ երթևեկության համար նախատեսված մաքսը՝ վերացվում<sup>64</sup>: Վերջինիս հաջորդած Մահմադղուլի խանը (1653-1659) ժամրացնում է հարկերը, ճանապարհների վրա հարկ դնում, բարձրացնում ցորենի գինը և այլն<sup>65</sup>: Հաջորդ խանը՝ Նաջաֆղուլին, (1659-1663), ըստ Չաքարիա Քանաքեռցու, հատկապես իր գործունեության երկրորդ շրջանում աչքի էր ընկնում բացահայտ հակաեկեղեցական քաղաքականությամբ<sup>66</sup>: Նաջաֆղուլի խանից հետո կարճ ժամանակահատված պաշտոնավարած Ամիրզունայի որդի Աբբասին (1663-1666) հաջորդում է ազգությամբ լեզգի Սեֆիդղուլի խանը (1666-1674), որը կրկին աչքի էր ընկնում իր հակաեկեղեցական դիրքորոշմամբ<sup>67</sup>: Պատմիչն անդրադառնում է նաև Սարուխան (1674-1675), Սեֆիդղուլի (1675-1679), Ջալ (1679-1689), Մուրթուլզադղուլի (1689-1691), Մահմադղուլի (1693-1696) և Ֆարզալի (1696-?) խաների գործունեությանը: Հատկապես կարևորվում են «Պատմագրության» վկայությունները Ջալ խանի պաշտոնավարման վերաբերյալ, որն իր բեղուն գործունեությամբ կարողացավ գրեթե վերացնել 1679 թ. Երևանի մեծ երկրաշարժի ծանր հետևանքները:

**Երկրորդ ենթազյխում՝ «Երևանի խանության XVII դ. երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական կյանքը»**, քննության են առնված Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական կենտրոն Երևանի խանության սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ «Պատմագրության» վկայությունները, վեր է հանված դրանց աղբյուրագիտական կարևորությունը:

Թուրք-պարսկական հարաբերություններում XVII դ. երկրորդ կեսից հաստատված համեմատական խաղաղությունը Երևանի խանության տնտեսական զարգացման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում: Առաջընթաց են ապրում տնտեսության տարբեր ճյուղերը՝ այգեգործությունը, հացահատիկային և բանջարանոցային կուլտուրաների մշակությունը, բարելավվում են ոռոգման համակարգը, առևտուրը և այլն:

Չաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ ոռոգման համակարգի կարևորությունից ելնելով՝ գյուղացիները շատ հաճախ մշակովի հողերի ոռոգման խնդիրներն իրենց միջոցներով էին հոգում<sup>68</sup>:

«Պատմագրության» արժեքավոր վկայությունների համաձայն՝ հայերն առևտրական կապերով կապված էին Օսմանյան պետության մի շարք քաղաքների, Այսրկովկասի առևտրական կարևոր կենտրոններ Գանձակի, Շամախու, Ինչպես նաև Գիլանի և այլ շրջանների ու քաղաքների հետ և զբաղվում էին մետաքսի ու թանկարժեք այլ իրերի առևտրով<sup>69</sup>:

Չաքարիա Քանաքեռցին անդրադառնում է նաև Արևելյան Հայաստանի վաճառական տնտեսության խնդիրներին: «Պատմագրության» վկայություններից պարզ է դառնում, որ վաճառական տնտեսության զարգացումը մեծապես պայմանավորված էր հողերի առաջնորդների անձնական հատկանիշներով: Ըստ պատմիչի՝ վաճառական

<sup>62</sup> Նույն տեղում, հ. II, էջ 16-17:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 19-20:

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 38-39:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 44-45:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 79-80:

<sup>68</sup> Չաքարիա Սարկավազ, հ. II, էջ 132:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 131-132:

հողատարածքների ընդարձակումը, տնտեսական շահույթ ապահովելուց զատ, նպատակ է հետապնդել հայ բնակչությանն ազատելու պարսից հարկահանման եղեքուններից:

Երևանի խանության հարկային համակարգը, համաձայն Չաքարիա Քանաքեռցու, գերազանցապես խարսխված էր շահական արքունիքի ընդունած օրենքների և որոշումների վրա, սակայն շատ հաճախ Երևանի խաներն իրենց ենթակա հարկային պաշտոնյաների միջոցով իրականացնում էին սեփական շահերից բխող հարկային քաղաքականություն:

**Երրորդ ենթագլխում՝ «Յայոց եկեղեցու XVII դ. պատմության հարցերը»**, ցույց է տրված Սեխլու վանականի գլխավորած աղանդավորական շարժման և հակորեղիազարյան պայքարի վերաբերյալ «Պատմագրության» վկայությունների աղբյուրագիտական կարևորությունը:

Չաքարիա Քանաքեռցու համաձայն՝ Սեխլուի շարժման գլխավոր թիրախը կուսակրոն արեղաներին էին, որոնց միջոցով հարստահարվում էին վանական կալվածքներում աշխատող գյուղացիները<sup>70</sup>: Պատմիչի վկայությամբ՝ Սեխլուն և նրա կողմնակիցները դեմ էին նյութապաշտությանը<sup>71</sup>, իսկ շարժման մասնակիցների թիվը հասնում էր 500-ի<sup>72</sup>: «Պատմագրության» համաձայն՝ շարժմանը մասնակիցել են երեցներ, գյուղացիներ և առևտրականներ<sup>73</sup>:

Չաքարիա Քանաքեռցին Յակոբ Դ Ջուղայեցու (1655-1680) դեմ Եղիազար Այնթափցու սկիզբ դրած պայքարի հիմնական մեղավոր ներկայացնում է Օնփրիոս Երևանցի վարդապետին<sup>74</sup>: Վերջինիս նախածեռնությամբ էլ Յակոբ Ջուղայեցուց դժգոհ էջմիածնի միաբանները 1664 թ. նամակով դիմել են Եղիազար Այնթափցուն՝ նրանից խնդրելով գալ էջմիածին և դառնալ Յայոց կաթողիկոս<sup>75</sup>: Եղիազար Այնթափցին, նամակը ստանալուց հետո Սսի խաչատուր Գաղատացի (1657-1674) կաթողիկոսի ձեռքով Յալեպ քաղաքում 1664 թ. օծվում է որպես թուրքահայ թեմերի ընդհանրական կաթողիկոս<sup>76</sup>: Ինքնահնար կաթողիկոսի դեմ պայքարի կազմակերպման գործում Յայոց կաթողիկոս Յակոբ Դ Ջուղայեցին ստանում էր Կ. Պոլսի հայոց պատրիարք Մարտիրոս Կաֆայեցու, Պարսկաստանի խոշոր հայ առևտրականներ Միրզա և Խոսրով մեծատունների գործուն օջակցությունը<sup>77</sup>: Ի վերջո, պատմիչի վկայությամբ, սուլթան Մուհամմեդ IV-ի (1648-1687) միջնորդությամբ էջմիածնի կաթողիկոսը վերականգնում է իր նախկին իրավունքները<sup>78</sup>:

Չաքարիա Քանաքեռցին անդրադառնում է նաև Յակոբ Ջուղայեցու պարտքերի խնդրին, Եղիազար Ա Այնթափցու (1682-1691) և Նահապետ Ա Եղեսացու (1691-1705) պաշտոնավարմանը: Պատմիչն առանձին մանրամասնությամբ անդրադառնում է Նահապետ Եղեսացու ժամանակավոր պաշտոնակությանը, որի նախածեռնողը Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցին էր: Նա, «Պատմագրության» համաձայն, կարճ ժամանակով դառնում է Յայոց կաթողիկոս: Սակայն, ի վերջո, Նահապետ Եղեսացին վերականգնում է իր իրավունքները, իսկ Ստեփանոս Ջուղայեցին բանտում կնքում է իր մահկանացուն<sup>79</sup>:

**Երրորդ գլուխը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԶԱՐԿԻՑ ԵՐԿՐԵՐԻ XV-XVII ԴԴ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԱՐՑԵՐՆ ԸՆՏ ՁԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՐՑՈՒՄ»**, բաղկացած է երեք ենթագլխից:

<sup>70</sup> Նույն տեղում, հ. I, էջ 48:

<sup>71</sup> Նույն տեղում, էջ 49:

<sup>72</sup> Նույն տեղում:

<sup>73</sup> Նույն տեղում:

<sup>74</sup> Նույն տեղում, հ. II, էջ 85:

<sup>75</sup> Չաքարիա Սարկավազ, հ. II, էջ 71:

<sup>76</sup> Նույն տեղում, էջ 72:

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 72-73:

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 76:

<sup>79</sup> Նույն տեղում, էջ 136-137:



**Առաջին ենթագլխում՝ «Կարա-կոյունլունների պետության XV դ. պատմությունը»,** աղբյուրագիտական վերլուծության են ենթարկված կարա-կոյունլունների պետության XV դ. պատմության վիճահարույց խնդիրների վերաբերյալ «Պատմագրության» վկայությունները:

Կարա-կոյունլունների պետության XV դ. պատմության վերաբերյալ Ջաքարիա Քանաքեռցու հիշատակություններն աչքի են ընկնում ժամանակագրական և փաստագրական սխալներով, որը պայմանավորված է այլ գրավոր աղբյուրներից առանց քննադատական մոտեցման պատմիչի օգտվելու հանգամանքով: Մասնավորապես, Ջաքարիա Քանաքեռցու համաձայն, Ջհանշահը Շամշույլտեն գրավել է 1629 թ., Սպահանը, Խորասանը և Թամուրյան պետության մայրաքաղաք Չերաթը՝ 1461-ին<sup>80</sup>: Մինչդեռ Շամշույլտեն գրավել է 1440 թ. մայիսի սկզբին<sup>81</sup>, Սպահանը՝ 1453 թ., իսկ Խորասանը և Չերաթը՝ 1457 թ. ընթացքում<sup>82</sup>: Պատմիչը սխալվում է նաև ակ-կոյունլունների առաջնորդ Ուզուն-Յասանի որդի Յաղուբին<sup>83</sup> ներկայացնելով որպես Ջհանշահի թոռ<sup>84</sup>, իսկ Սեֆյան արքայատոհմը համարելով վերջինիցս սերված<sup>85</sup>:

**Երկրորդ ենթագլխում՝ «Սեֆյան Պարսկաստանի XVI-XVII դդ. պատմությունը»,** քննության են առնված Սեֆյան Պարսկաստանի XVI-XVII դդ. պատմության վերաբերյալ «Պատմագրության» վկայությունները, վեր է հանված դրանց աղբյուրագիտական կարևորությունը:

Ի տարբերություն պատմագրության մեջ տարածված տեսակետի, համաձայն որի՝ նախքան գահակալումը Իսմայիլ I-ը (1502-1524) բանտարկվել է Աղթամար կղզում<sup>86</sup>, Ջաքարիա Քանաքեռցու ուշագրավ հաղորդմամբ՝ ապագա շահի կողմնակիցները վերջինիս փախցրել են Աղթամար կղզի՝ ակ-կոյունլու ցեղի առաջնորդ Ուզուն-Յասանի որդի Յաղուբի վրեժխնդրությունից փրկելու նպատակով<sup>87</sup>:

Շահ Թահմասպ I-ի (1524-1576) պատմիչի կարևոր վկայությունները վերաբերում են շահի եղբայր Ալիսաի ապստամբության հանգամանքներին: Պատմիչի արժեքավոր վկայությամբ՝ Ալիսաը, 1548 թ. Շիրվանում ապստամբելով և պարտվելով, փախչում է Կ. Պոլիս՝ սուլթան Սուլեյմանի (1520-1566) հետ արշավանք կազմակերպելով՝ դեպի Պարսկաստան<sup>88</sup>:

Շահ Իսմայիլ II-ի (1576-1577) վերաբերյալ «Պատմագրության» արժեքավոր վկայության համաձայն՝ պարսից տիրակալը, պետական անվտանգության խնդրից ելնելով, սպանել է տալիս իր յոթ եղբայրներին և բազմաթիվ ազնվատոհմիկների<sup>89</sup>:

Շահ Խուրաբանդայի (1577-1587) գահակալման ժամանակաշրջանի վերաբերյալ «Պատմագրության» կարևոր վկայությունները վերաբերում են Լալա-Մուստաֆա (1579) և Ֆահրադ (1583) փաշաների երևանյան արշավանքներին: Պատմիչի համաձայն՝ Լալա-

<sup>80</sup> Նույն տեղում, հ. I, էջ 4:

<sup>81</sup> Կիրակոսյան Գ., Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքեն ցեղերի արշավանքների շրջանում (1386– 1500 թթ.), Ե., 1997, էջ 101:

<sup>82</sup> Minorsky V., Jihan-Shah Qara-Qoyunlu and His Poetry (Turkmenica, 9), Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, Vol. 16, No. 2, 1954, p. 294-295.

<sup>83</sup> Босворн К., Мусулманские династии, М., 1971, с. 223, Դանելյան Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի 17–րդ դարի պատմության սկզբնաղբյուր, Ե., 1978, էջ 200:

<sup>84</sup> Ջաքարիա Սարկավազ, հ. I, էջ 6:

<sup>85</sup> Նույն տեղում, հ. II, էջ 1:

<sup>86</sup> Шараф-Наме, м. II, с. 145.

<sup>87</sup> Ջաքարիա Սարկավազ, հ. I, էջ 7:

<sup>88</sup> Նույն տեղում, էջ 10-11:

<sup>89</sup> Նույն տեղում, էջ 12, հմմտ. Մանր ժամանակագրություններ (XIII–XVIII դդ.), հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Ե., 1956, էջ 241, Առաքել Դավրիժեցի, էջ 457, Խաչատուր արեղայի Ջուղայեցու Պատմութիւն Պարսից, աշխատասիրությամբ Բաբելեն վարդապետի Աղավելեանց, Վաղարշապատ, 1905, էջ 100, Шараф-Наме, м. II, с. 232:

Մուստաֆան Երևանից գերում է 60.000 քրիստոնյա և մահմեդական բնակչության<sup>90</sup>, իսկ Ֆահրադ փաշան Երևանում նոր բերդ է կառուցում<sup>91</sup>:

«Պատմագրություն»-ն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Շահ Աբբաս I-ի կազմակերպած հայության 1604 թ. մեծ բռնագաղթի մասին: Չնայած Ջաքարիա Քանաքեռցին բռնագաղթածների վերաբնակեցման տարածքների վերաբերյալ «Պատմագրության» հիշատակությունների աղբյուր է ներկայացնում Առաքել Դավրիժեցուն<sup>92</sup>, սակայն, հավանաբար օգտվելով բանավոր վկայություններից, նշում է այնպիսի բնակավայրեր, որոնք Առաքել պատմիչի մոտ բացակայում են: Որպես վերաբնակեցման լրացուցիչ գավառներ նշվում են Արտավիլը, Սիարը, Ապահիրը, Ղազվինը, Համադանը, Գուլփեքանը, Քրմանը, Խունասարը, Խոյիկանը, Շխաբանը<sup>93</sup>:

Շահ Սեֆի I-ը (1629-1642), «Պատմագրության» վկայությամբ, կենտրոնախույս շարժումներից խուսափելու լավագույն տարբերակը գտնում է իրեն անցանկալի հիշխաններին կոտորելու մեջ<sup>94</sup>:

Անդրադառնալով շահ Աբբաս II-ի (1642-1666) գահակալմանը՝ Ջաքարիա Քանաքեռցին նշում է, որ շահը նպատակ է հետապնդել թուրքերի կողմից 1638 թ. գրաված Բաղդադը հետ նվաճելու, սակայն, պայմանավորված Թուրքիայի հետ կնքած 30-ամյա հաշտության պայմանագիրը չխախտելու հանգամանքով, հրաժարվել է այդ ձեռնարկից<sup>95</sup>:

Շահ Սուլթան-Հունեիմի (1694-1722) գահակալման վերաբերյալ «Պատմագրության» արժեքավոր վկայությունը վերաբերում է հպատակ ժողովուրդների շրջանում աղջկաժողովների կազմակերպմանը, որի դեմ պայքարի եղանակը, Ջաքարիա Քանաքեռցու համաձայն, ժողովուրդը գտնում է աղջիկներին շուտ անուսնացնելու մեջ<sup>96</sup>:

**Երրորդ ենթագլխում՝ «Վրաստանի XVII դ. պատմությունը»**, վեր է հանված Վրաստանի XVII դ. պատմության վերաբերյալ Ջաքարիա Քանաքեռցու վկայությունների աղբյուրագիտական կարևորությունը:

«Պատմագրություն»-ն ուշագրավ տեղեկություններ է պարունակում պարսկական լծի դեմ Գեորգի Սահակաձեի գլխավորած ապստամբության վերաբերյալ: Ի տարբերություն XX դ. վրաց պատմագիտության, որը Գեորգի Սահակաձեին ներկայացնում է որպես պարսից լծից վրաց ժողովրդի ազատարարի<sup>97</sup>, «Պատմագրություն»-ից պարզ է դառնում. որ Գեորգի Սահակաձեն ապստամբության չի ձգտել այնքան ժամանակ, քանի դեռ իր կյանքին և Վրաստանի թագավոր դառնալու հեռանկարին վտանգ չի պատճառել<sup>98</sup>:

Ի տարբերություն վրաց պատմագրության, որը Շահնավազի (1658-1676) մահը հիվանդության հետևանք է համարում<sup>99</sup>, Ջաքարիա Քանաքեռցին նշում է վրաց արքայի՝ ինքնասպան լինելու հանգամանքը<sup>100</sup>:

Ջաքարիա Քանաքեռցին Գեորգի XI-ի (1676-1688) գլխավորած հակապարսկական քաղաքականության դրսևորումը սխալմամբ վերագրում է ավելի ուշ գահակալած շահ Սուլթան Հունեիմի (1694-1722) ժամանակաշրջանին: Բացի այդ, ճիշտ չի ներկայացնում նաև նրա կենտրոնախույս ձգտումների պատճառը: Ջաքարիա Քանաքեռցու հաղորդմամբ՝

<sup>90</sup> Ջաքարիա Սարկավազ, հ. I, էջ 13:

<sup>91</sup> Նույն տեղում:

<sup>92</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>93</sup> Նույն տեղում, էջ 19-20, հմտ. Առաքել Դավրիժեցի, էջ 82:

<sup>94</sup> Ջաքարիա Սարկավազ, հ. I, էջ 42:

<sup>95</sup> Նույն տեղում, հ. II, էջ 34:

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 138:

<sup>97</sup> Бердзенишвили Н., Дондуа В., Думбадзе К., Меликишвили Г., Месхиа Ш., История Грузии, т. I, с древнейших времен до 60-х годов XIX века, Тбилиси, 1962, с. 302.

<sup>98</sup> Ջաքարիա Սարկավազ, հ. I, էջ 27:

<sup>99</sup> Вахушти Багратиони, с. 75, Парсадан Горгиджанидзе, с. 135.

<sup>100</sup> Ջաքարիա Սարկավազ, հ. II, էջ 99:

հակապարսկական այս քայլերի պատճառը Գեորգի XI-ի դստեր հանդեպ շահ Սուլթան-Յուսեյնի հավակնություններն էին<sup>101</sup> :

**ԵՋՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** ի մի են բերված աստեմախության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. Ձաքարիա Քանաքեռցու անձն ու ստեղծագործությունն ամբողջական ուսումնասիրության առարկա չի հանդիսացել: Պատմիչի գործունեությանը մեծամասամբ անդրադարձել են հայ պատմագրությանը նվիրված աշխատությունների հեղինակները, որոնք մյուս պատմիչներին զուգահեռ փոքրածավալ հոդվածներ են նվիրել նրան: Անտեսելով պատմիչի ապրած ժամանակաշրջանի և գործունեության միջավայրի առանձնահատկությունները՝ նշված հեղինակների մեծ մասը Ձաքարիա Քանաքեռցուն համարել է քննադատական մոտեցումից զուրկ հեղինակ:

2. Հայ միջնադարյան մատենագրության կարևորագույն երկասիրությունների թվին դասվող «Պատմագրության» շարադրման միջոցով Ձաքարիա Քանաքեռցին նպատակ է հետապնդել զալիք սերնդին նախապատրաստելու՝ պարսկական լծից Հայաստանի ազատագրման համար:

3. Հենվելով միայն «Պատմագրության» կենսագրական հաղորդումների վրա՝ մինչև այժմ Ձաքարիա Քանաքեռցու ծննդյան և մահվան թվականներ են նշվել համապատասխանաբար 1627–ը և 1699–ը: Սակայն 1676 թ. հիսնամյա Ձաքարիա Քանաքեռցու ծեռքով Մատենադարանի № 1404 ձեռագրի հատվածներից մեկի արտագրությունը, ինչպես նաև 1724 թ. Ավետիս երեցի կողմից գրված մի ժողովածուի մեջ 1701 թ. Ձաքարիա Քանաքեռցու մասին հիշատակությունը հիմք է տալիս պատմիչի ծնունդը 1626–ով, իսկ մահը՝ 1701–ով թվագրելու համար:

4. «Պատմագրություն»–ը և «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննու վանից»–ը պարունակող ձեռագրերը հիմնք են, որոնք գտնվում են Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (Մատենադարան): Այդ ձեռագրերը գտնվում են հետևյալ թվահամարների ներքո՝ 1522, 1662, 3024, 8018 և 8636: «Պատմագրության» երեք հատորները միաժամանակ պարունակում է միայն № 3024 ձեռագիրը: Ձեռագրերից № 1522–ը, № 8018–ը և № 8636–ը պարունակում են Հովհաննավանքի «Կոնդակը»–ը, իսկ № 1662–ը՝ «Պատմագրության» երկու հատորները:

5. Ձաքարիա Քանաքեռցին մեծապես արժևորել է բանավոր աղբյուրները՝ ժողովրդական գրույցները, առասպելները, ականատեսների վկայությունները: «Պատմագրության» մի մասի շարադրանքը պատմիչը կատարել է ականատեսների կամ իրադարձությունների մասին տեղյակ մարդկանց հաղորդումների հիման վրա, որոնց հետ նա հանդիպել է իր շրջագայությունների ժամանակ: Սակայն աղբյուրագիտական մեծ արժեք ունեն հատկապես պատմիչի ապրած ժամանակաշրջանում և նրա ականատեսությամբ տեղի ունեցած դեպքերի նկարագրությունը:

«Պատմագրության» կարևորագույն հիմքն են տարաբնույթ գրավոր աղբյուրները՝ Հայասնավորքը, հիշատակարանները, կոնդակները և միջնադարյան հայ պատմիչների երկասիրությունները:

Ինչպես Ձաքարիա Քանաքեռցու վկայություններից, այնպես էլ միջնադարի հայ պատմագրության մի շարք կոթողների հետ «Պատմագրության» համապատասխան հատվածների համեմատությունից պարզ է դառնում, որ պատմիչն օգտվել է Ազաթանգեղոսից, Մովսես Խորենացուց, Փավստոս Բուզանդից, Անանուն գրուցագրից (կարծեցյալ Շապուհ Բագրատունի), Կիրակոս Գանձակեցուց, Ստեփանոս Օրբելյանից, Թովմա Մեծոփեցուց, Հովհաննիսիկ Ծարեցուց և Առաքել Դավրիժեցուց:

<sup>101</sup> Նույն տեղում:

Աղբյուրագիտական–համեմատական քննությունը փաստում է խաչատուր Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից»–ի և Սինաս Ամդեցու «Պատմութիւն քաղաքին Յանւոյ»–ի համար «Պատմագրութեան» աղբյուր հանդիսանալը:

6. Չաքարիա Քանաքեռցու «Պատմագրություն»–ը կարևորագույն սկզբնաղբյուր է Երևանի XVII դ. խանութեան պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Իբրև անաչառ ականատես՝ պատմիչը ներկայացրել է Երևանի խաների գործունեության մանրամասները, որոնք երբեմն այլ հեղինակների մոտ չեն հանդիպում, տվել նրանց կերպարի դրական և բացասական կողմերը: Շնորհիվ Չաքարիա Քանաքեռցու վկայությունների՝ հնարավոր է դառնում կազմելու Ամիրգունա, Թահմասպուլի, Քալբալի, Չաղաթա Մահմադ, Խոսրով, Նաջաֆղուլի, Աբբաս, Սեֆիղուլի, Սարուխան (խանի տեղապահ), Սեֆիղուլի, Չալ, Մուրթուզղուլի (խանի տեղապահ), Մահմադղուլի և Ֆարգալի խաների կառավարման ժամանակաշրջանի ամբողջական պատկերը:

7. «Պատմագրություն»–ը չափազանց արժեքավոր տեղեկություններ է պարունակում Երևանի խանության XVII դ. սոցիալ–տնտեսական պատմության վերաբերյալ: Չաքարիա Քանաքեռցին առաջին պատմիչն է, որն իր հիմնական ուղղություններից մեկը դարձրեց վանական հաստատությունների տնտեսական պատմության շարադրանքը: Արժանահիշատակ են «Պատմագրության» վկայությունները ոչ միայն Էջմիածնի և մյուս վանական հաստատությունների (Հովհաննավանք, Բջնի) տնտեսական կարողությունների, վանքապատկան գյուղացիության հետ նրանց ունեցած փոխհարաբերությունների, այլև հայ բնակչության սոցիալական վիճակի, հարկային պարտավորությունների ու պարտադիր աշխատանքի մասին:

8. Արևելյան Հայաստանում XVII դ. սկզբին Սեֆլու վանականի գլխավորած աղանդավորական շարժման վերաբերյալ Չաքարիա Քանաքեռցու վկայություններն իրենց եզակիությամբ չափազանց արժեքավոր են: Պատմիչն անհանդուրժող է եկեղեցու պաշտոնական գաղափարախոսությանը հակադրվող ցանկացած հոսանքի հանդեպ: Շնորհիվ «Պատմագրության» վկայությունների՝ պատկերացում ենք կազմում այս շարժման հիմնական գաղափարական ուղղությունների, շարժման ընթացքի, մասնակից հասարակական շերտերի մասին:

9. Չաքարիա Քանաքեռցու վկայությունները լույս են սփռում Էջմիածնի կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցու և Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնթափցու միջև շուրջ 20 տարի ընթացած պայքարի վրա, որի նպատակը թուրքահայ թեմերն Էջմիածնից անջատելն ու ընդհանրական կաթողիկոս դառնալն էր: Հակոբ Ջուղայեցու ընդգծված կողմնակից լինելով հանդերձ՝ պատմիչը զուսպ է արտահայտվում Եղիազար Այնթափցու վերաբերյալ: Դա պայմանավորված է Էջմիածնի կաթողիկոսական Աթոռը զբաղեցնելու ընթացքում Եղիազար Այնթափցու եկեղեցաշինական բուռն գործունեությամբ, ինչը դրական է ազդել պատմիչի դիրքորոշման վրա: Չաքարիա Քանաքեռցին իր անաչառությունը չի կորցնում նաև Ստեփանոս Ջուղայեցու կողմից Էջմիածնի կաթողիկոսական աթոռին բազմելու համար գործող կաթողիկոս Նահապետ Ա Եդեսացու դեմ պայքարի նկարագրության ժամանակ:

10. Չաքարիա Քանաքեռցու վկայություններն արժևորվում են նաև XV դ. կարա–կոյունլուների տիրակալների գործունեության և Սեֆյան Պարսկաստանի XV–XVII դդ. պատմության տարաբնույթ հարցերի առնչությամբ: «Պատմագրություն»–ը կարևոր տեղեկություններ է պարունակում Սեֆյան տերության հիմնադիր Իսմայիլ I–ի, Սեֆյան տիրակալներ Թահմասպ I–ի, Խուրաբանդայի, Աբբաս I–ի, Սեֆի I–ի, Աբբաս II–ի և Սուլթան–Հուսեյնի ներքին ու արտաքին քաղաքականության, XVI–XVII դդ. թուրք–պարսկական պատերազմների մասին: Արժեքավոր են 1604 թ. շահ Աբբաս I–ի կազմակերպած մեծ բռնազաղթի մասին «Պատմագրության» տեղեկությունները: Հատկապես հայ բնակչության վերաբնակեցման տարածքների վերաբերյալ Չաքարիա

Քանաքեռցու վկայություններն իրենց եզակիությամբ աղբյուրագիտական մեծ կարևորություն ունեն:

11. Վրաստանի XVII դ. պատմության վերաբերյալ վրաց պատմիչների վկայությունների կողքին Ջաքարիա Քանաքեռցու հաղորդումները աղբյուրագիտական մեծ արժեք ունեն: Դրանք աչքի են ընկնում իրենց անկողմնակալությամբ և պատմական արժեքավոր տեղեկությունների ընդգրկմամբ: Ձերծ մնալով վրաց պատմիչներին բնորոշ աչառու կողմնակալությունից՝ Ջաքարիա Քանաքեռցին Գեորգի Սահակաձեի և Գեորգի XI–ի հակապարսկական ելույթների, վրաց արքաներ Ռոստոմի, Շահնավազի (Վախթանգ V), Զերակլ I–ի (Նազար–ալի) կառավարման վերաբերյալ այնպիսի տեղեկություններ է հաղորդում, որոնք որոշ դեպքերում վրաց պատմիչների մոտ բացակայում են:

***Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.***

1. Ջաքարիա Սարկավազ Քանաքեռցու կենսագրությունը, Զայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2010, N 11, էջ 78-85:
2. XVII դ. Երևանի խաների գործունեությունը Ջաքարիա Սարկավազ Քանաքեռցու «Պատմագրության» մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 2011, № 1, էջ 143-156:
3. Երևանի խանության XVII դ. վանական տնտեսությունը և հարկային համակարգը Ջաքարիա Քանաքեռցու լուսաբանմամբ, Զայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2011, N 12, էջ 108-123:
4. Վրաստանի XVII դ. պատմության հարցերը Ջաքարիա Քանաքեռցու «Պատմագրության» լույսի ներքո, ԶԳ ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2012, № 1, էջ 54-62:

ВИРАБЯН АРМЕН СПАРТАКОВИЧ  
ЖИЗНЬ И ИСТОРИОГРАФИЯ ЗАКАРИЯ КАНАКЕРЦИ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 “Историография, источниковедение”.

Защита состоится 12-го июня 2012 года в 14<sup>00</sup>, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Настоящее исследование посвящено проблемам жизни и историографического наследия одного из последних заслуженных деятелей армянской историографии позднего средневековья, Закария Канакерци.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы. Во введении аргументируется научная новизна. Затем представлены намерения и задачи исследования, проанализированы использованные источники и литература.

В первой главе работы - "Закария Канакерци и его "Хроника" - кратко изложена тяжелая политическая и социально-экономическая ситуация в Армении, которая была ареной турецко-персидских войн первой половины XVII века. Акцентируются благоприятные условия для возрождения культурной жизни в Армении, что, в свою очередь, повлияло на широкое развитие армянской историографии после подписания мирного договора Каср-э-Шири в 1639 году. Кроме того, выясняются некоторые спорные вопросы биографии Закария. В частности, с помощью детального изучения источников уточнены даты рождения и смерти летописца. Кроме того, выявлены планы и цели Закария в период создания "Хроники", а также языко-стилистические особенности автора. В той же главе истолкованы устные и письменные источники "Хроники" и степень критического подхода Закария к этим источникам. В этом контексте затрагивается вопрос о том, что "Хроника" использовалась и другими летописцами как важнейший источник. Взвешены и обсуждены проблемы оценки историографического наследия Закария в армянской исторической науке и характеристики существующих рукописей "Хроники", описан источник, выявлены ошибки и упущения вышесказанных рукописей.

В конце этой главы приводится краткое описание публикаций "Хроники" на армянском, русском, французском и английском языках, подчеркивается историческая и научная ценность работы Закария.

Во второй главе - "Трактовка истории Восточной Армении Закарием Канакерци" - анализируются упоминания Закарием о деятельности ханов Еревана в XVII веке. Согласно этим упоминаниям положительные и отрицательные стороны деятельности этих правителей были главным образом обусловлены не только несовершенством ханского режима, но и людскими и практическими характеристиками тех лиц, которые занимали ханский трон. Кроме того, были исследованы упоминания в "Хронике" о социально-экономической жизни Ереванского ханства, центра административно-политической жизни Восточной Армении. Важность сообщений Закария о торговле, монастырской экономике и налоговой

системе Армении, в качестве первичных источников, обсуждена с особой внимательностью к фактам и деталям. В этой главе исследованы упоминания о сектантском движении во главе с монахом Мехлу, а также о конфликте между Католикосом Всех Армян Акопом IV Джугаеци (1655-1680) и Армянским Патриархом Иерусалима Егиазаром Айнтапци (1664-1680), которая длилась почти двадцать лет. Акцентируется тот факт, что упоминания Закария об обсуждаемом вопросе в некоторых особых случаях характеризуются субъективностью из-за амбиций летописца защищать интересы Католикоса армян и Армянской Апостольской Церкви.

В третьей главе - «Вопросы истории соседних стран Армении согласно сообщениям Закария» – проведены источниковедческие исследования упоминаний автора о спорных вопросах истории государства Кара Коюнлу XV века. Эти упоминания содержат явные хронологические и фактические ошибки, так как письменные источники были использованы Закарием без критического подхода к ним. Кроме того, анализируются упоминания об истории Сафавидской Персии XVI-XVII веков, и нужно сказать, что эти упоминания характеризуются высокой объективностью, в отличие от частичной ориентации персидской историографии того же периода. В этой главе также подчеркиваются отдельные эпизоды истории Грузии XVII века, особенно антиперсидские восстания грузинского народа, о которых в своей работе упоминает Закария, подходя к вопросам с точки зрения историзма и объективности, что нельзя сказать о панегирической грузинской дворцовой историографии.

В заключении изложены основные итоги и выводы исследования.

THE LIFE AND HISTORIOGRAPHIC LEGACY OF ZAKARIA KANAKERTSY

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of “Historiography and source study” 07.00.05

The defense of the dissertation will be held on the 12<sup>th</sup> of June, 2012, 14<sup>00</sup> at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4):

SUMMARY

The present study is dedicated to the problems of life and historiographic legacy of one of the last honored personalities of the late medieval Armenian historiography, Zakaria Kanakertsy.

The thesis consists of an introduction, three chapters, a conclusion and a list of the sources and literature used. The scientific novelty is argued in the introduction. Then intentions and assigned tasks of the study are presented and the sources and literature analyzed.

The hard political and social-economic situation in Armenia which was an arena of the Turkish-Persian wars in the first half of the XVII century, are presented briefly in the first chapter of the work – “Zakaria Kanakertsy and his “Chronicle””. Reference is made to the favourable conditions for the revival of cultural life in Armenia that, in its turn, influenced on the profound development of Armenian historiography after the Qasr-e-Shirin Peace Treaty was signed in 1639. Also, some controversial issues about the biography of Zakaria are clarified. In particular, the dates of birth and death of the narrator are specified through a detailed examination of the sources. In addition, the plans and ambitions of Zakaria during the period of making “Chronicle” as well as the chronological frames of three volumes of the composition and the language and stylistic features of the author are enlightened. Both oral and written sources of “Chronicle” and the degree of critical attitude of Zakaria towards these sources have been brought to light in the same chapter. The fact that “Chronicle” has been used by other narrators as a primary source is revealed in this context. Reference is made to the problem of valuing the



historiographic legacy of Zakaria in Armenian historical science as well as to the characteristics of the extant manuscripts of “Chronicle” under discussion, providing the source description as well as the lapses and omissions of these manuscripts. The brief description of Armenian, Russian, French and English publications of “Chronicle” and its historical and scientific value are presented at the end of this chapter.

In the second chapter – “The elucidation of history of Eastern Armenia by Zakaria Kanakertsy” – the citations on activities of the khans of Yerevan in the XVII century by Zakaria are analyzed according to which both positive and negative sides of activities of the khans had been greatly conditioned not only by the imperfection of khan regime, but also by the human and practical characteristics of the individuals occupying the khan throne. Furthermore, the citations of “Chronicle” on the social-economic life of the Yerevan khanate, a center of the administrative and political structure of Eastern Armenia, have been investigated. The importance of reports on the trade, monastic economy and tax system by Zakaria as primary sources is considered with scrupulous attention to facts and details. A historical and source investigation of citations of “Chronicle” on the sectarian movement led by Monk Mekhlou as well as on the conflict between All Armenian Catholicos Hakob IV Djughatsy (1655-1680) and Armenian Patriarch of Jerusalem Eghiazar Aintaptsy (1664-1680) that lasted almost twenty years, has been carried out in this chapter. Accents are made on the fact that the citations of Zakaria on the matter under discussion are characterized by their subjective nature in some special cases due to ambition of the priest-narrator to defend the interests of the Armenians’ Catholicos and Armenian Apostolic Church.

In the third chapter – “The problems of history of Armenia’s neighboring countries with reference to Zakaria” - the citations of “Chronicle” on the controversial problems of history of the Kingdom of Kara Koyunlu of the XV century have been analyzed in the field of source study. These citations contain obvious chronological and factual errors because the written sources were used by Zakaria without a critical approach. Also, the references of “Chronicle” on the history of the XVI-XVII century Safavid Persia, which are characterized as high objectives unlike the partial orientation of Persian historiography of the same period, are analyzed. In addition, reference is made to the particular episodes of history of the XVII century in Georgia, especially to the mentions of anti-Persian rebellions of the Georgian people, and these mentions being free both from imperfection and bias typical to panegyric historiography of the Georgian palace.

The main findings and results of the study are summarized in the conclusion.